ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգ. և գյուղատնտ. գիտություններ VII, № 12, 1954 Биол. и сельхоз. науки

**Ա. Գ. Երիցյան**

# ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

*ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի Սեպտեմբերյան, Փետրվար-մարտյան և Հունիսյան պլենումները նշեցին, որ գյուղատնտեսական մթերքների արտադրության մակարդակը լրիվ չափով չի բավարարում սննդամթերքների ասպարեզում բնակչության, իսկ հումքի ասպարեզում թեթև ու սննդի արդյունաբերության աճող պահանջմունքները: Խնդիր է դրված առաջիկա 2—3 տարում ստեղծել գյուղատնտեսության շեշտակի վերելք: Գյուղատնտեսության հետ մնացող ճյուղերից մեկն էլ անասնաբուծությունն է:*

*Անասնապահությունը կարևոր տեղ է գրավում մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության էկոնոմիկայում և նրա հաջող զարգացման համար մենք ունենք բոլոր հնարավորությունները: Վերջին տարվա ընթացքում ռեսպուբլիկայի անասնապահները շատ բան են արել այդ ուղղությամբ: Ընթացիկ տարում կոլտնտեսությունները վարելահողերի, մարգագետինների և արոտավայրերի յուրաքանչյուր 100 հեկտարից համարյա 8 ցենտներով ավելի կաթ են ստացել, քան անցյալ տարի: Զգալի չափով իջել է կովերի ստերջությունը:*

*Անասնապահության մթերատվության բարձրացման ասպարեզում ընթացիկ տարում ամենամեծ հաջողությունների են հասել Ստեփանավանի կոլտնտեսությունները: Անցյալ տարվա համեմատությամբ, կոլտնտեսությունները կաթը ավելացրել են 16 862 ցենտներով և առ 1-ն հոկտեմբերի վարելահողերի, մարգագետինների ու արոտավայրերի յուրաքանչյուր 100 հեկտարին միջին հաշվով ստացել են 138 ցենտներ կաթ: Շրջանի 9 ֆերմա, բարձր կիթ ապահովելու համար, իրավունք կստանան 1955 թվականին մասնակցելու Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին:*

*Ձմռան-մսուրային շրջանը լավ կազմակերպելու և ձմեռելու ընթացքում անասուններին կուշտ կեր ապահովելու շնորհիվ Ղուկասյանի շրջանի կոլտնտեսությունները վերջին 2 տարում յուրաքանչյուր կովին ավելացրել են 608 կգ կաթ, իսկ շրջանի առաջավոր կոլտնտեսությունները (օրինակ՝ Զույգաղբյուրի կոլտնտեսությունը) 350 գլուխ կովից ստացել են յուրաքանչյուրից 1608 կգ կաթ: Ենի-յոլ և Գեղի գյուղերի կոլտնտեսությունների ոչխարաբույծները վարելահողերի, մարգագետինների և արոտավայրերի յուրաքանչյուր 100 հեկտարին ստացել են 3,67-ից մինչև 5,97 ցենտներ բուրդ:*

*Լավ են աշխատել նաև Բասարգեչարի շրջանի Կարակոյունի գյուղի կոլտնտեսության ոչխարաբույծները: Մի քանի տարվա ընթացքում ոչխարները լավացնելով նրբագեղմ ցեղի խոյերով, նրանք այս տարի 5500 ընդհանուր գլխաքանակից խուզել են յուրաքանչյուր ոչխարից 3,1 կգ բուրդ, իսկ վարելահողի յուրաքանչյուր 100 հեկտարին ստացել են համարյա 12 ցենտներ բուրդ:*

Վերջին մի քանի տարվա ընթացքում անասնապահության մթերատվության բարձրացման գործում զգալի հաջողություններ են ձեռք բերել Շահումյանի շրջանի կոլտնտեսությունները։ Այստեղ ամբողջ տարվա ընթացքում օրական երեք անգամ կթում և կերակրում են կովերին։ Կալինինի անվան, Վորոշիլովի անվան և այլ կոլտնտեսությունների ֆերմաներում ամբողջ տարին կովերը գտնվում են մսուրային պահպանման պայմաններում։ Կերաբաժնում ձմռանը մեծ տեղ են գրավում արմատապտուղները և սիլոսը, իսկ ամռանը՝ կանաչ խոտը։ 15 կոլտնտեսությունից 11-ի ֆերմաներում տեղակայված են ավտոխմուցներ։

Կերերն ավելացնելու համար կոլտնտեսությունները խոզանացան կուլտուրաների ցանք են մտցրել, բարձրացրել են տավարի և սիլոսային կուլտուրաների բերքը։ Միաս բարելավել են անասունների ցեղական կազմը։

Շրջանում աճել են անասնապահ վարպետներ։ «Լենինյան ուղի» կոլտնտեսության կթվոր Շուշիկ Սարգսյանը «Դոչկա» կովի կիթը հասցրել է 8390 կգ-ի, Կալինինի անվան կոլտնտեսության կթվոր Արևհատ Հայրապետյանը իրեն կցված 10 կովից կթում է յուրաքանչյուրից 3300 կգ, իսկ «Ստրելա» կովից՝ 7250 կգ։

Շրջանում յուրաքանչյուր 100 հեկտար հողին միջին հաշվով ստացվել է 315 ցենտներ կաթ, իսկ այնպիսի առաջավոր կոլտնտեսությունները, ինչպիսիք են 18-րդ պատմամագումարի անվան, Կալինինի անվան, Շահումյանի անվան, Ստալինի անվան, Վորոշիլովի անվան և Մոլոտովի անվան կոլտնտեսությունները ստացել են 485-ից մինչև 891 ցենտներ կաթ։ Այդ կոլտնտեսությունների փորձը ցույց է տվել, որ կենդանիների կերակրման, խնամքի, ինչպես նաև անասունների սրտական ու ցեղական կազմի բարելավման հանրամատչելի միջոցառումների արմատավորումը խիստ բարձրացնում է նրանց մթերատվությունը։

Ինչպես տեսնում ենք, ռեսպուբլիկայի առանձին կոլտնտեսություններ և շրջաններ շատ բան են արել անասնապահության մթերատվության բարձրացման ուղղությամբ։ Սակայն ամբողջությամբ վերցրած հանրային անասնապահության զարգացումը ռեսպուբլիկայում չի կարելի բավարար համարել։

Կովերի կթնատվությունը դեռևս մնում է ցածր։ Դեռևս մեծ է կովերի, ոչխարների և խոզերի սակարկությունը, ցածր՝ հավերի ձվատվությունը, ինկուբատորային ճտերն աճեցվում են մեծ կորուստներով։ Մի շարք կոլտնտեսություններում մատղաշների կորուստը տակավին մեծ է։

Մեր ռեսպուբլիկայի գիտական աշխատողների առջև մեծ խնդիրներ են դրված անասնապահության վիճակը բարելավելու ընդգծառում։ Այդ ուղղությամբ աշխատանքները պետք է ընթանան ինչպես գիտության և առաջավորների նվաճումները արտադրության մեջ արմատավորելու գործին օգնելու, այնպես էլ անասնապահության մթերատվության բարձրացման նոր, ավելի էֆեկտիվ եղանակներ որոնելու դեմ։

Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության Անասնապահության ինստիտուտը վերջին ժամանակներս Արտաշատի շրջանի կոլտնտեսություններում որոշ աշխատանք է կատարել կովերի մթերատվության բարձրացման ուղղությամբ, նրանց փոխադրել է ամռան-մսուրային պահպանման, կազմակերպել է կանաչ կոնվեյեր։ Ինստիտուտը ձեռնարկումներ է արել

տնտեսությունները ինֆեկցիոն հիվանդություններից ազատելու համար։ Ստեփանավանի, Թալինի, Սևանի շրջանների կոլտնտեսություններին օգնություն է ցույց տրվել արոտավայրերի օգտագործման ռացիոնալ եղանակների արմատավորման, կերի կուլտուրաների սերմերի ավելացման և մարգագետինների ու արոտավայրերի բերքատվության բարձրացման ուղղությամբ։ Ինստիտուտի աշխատակիցները Իջևանի և Նոր Բայազետի շրջանների կոլտնտեսություններին օգնություն են ցույց տալիս ոչխարների բոնիտացման գործում։

Արտադրության հետ համեմատաբար թույլ են կապված Զոոանասնաբուժական ինստիտուտի գիտական աշխատողները։ Նրանց աշխատանքը սահմանափակվում է Թալինի, Գորիսի, Նոր Բայազետի շրջանների առանձին կոլտնտեսություններով։

Ընդհանուր առմամբ գիտական աշխատողների կապը արտադրության հետ դեռևս շարունակում է մնալ անբավարար։ Մեր ռեսպուբլիկայի գիտական աշխատողները կոլտնտեսություններում քիչ են հանդես գալիս անասնապահության թեմաների վերաբերյալ դեկուցումներով, առաջավոր մեթոդները չեն ուսումնասիրում և խորը չեն թափանցում կոլտնտեսությունների աշխատանքային կյանքի մեջ։

Ընթացիկ տարվա ավելի քան 11 ամսում կոլտնտեսային կամ սովխոզային առաջավոր անասնապահի ոչ մի փորձ համարյա թե ընդհանրացված չէ։ Դրանում մեղավոր է ամենից առաջ Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության Գյուղատնտեսական և գիտության պրոպագանդայի գլխավոր վարչությունը, սակայն գիտական աշխատողներն էլ պատշաճ ուշադրություն չեն նվիրել այդ հարցին։

Փորձը ցույց է տվել, որ երբ գիտական աշխատողները արտադրությանն օգնում են պրոգրեսիվ ձեռնարկումներն արմատավորելու գործում, մեծ էֆեկտ է ստացվում։ Այսպես, օրինակ, մինչև Հայրենական Մեծ պատերազմը Ստեփանավանի շրջանի կոլտնտեսություններում մեծ շարժում էր սկսվել մարգագետինների բերքատվության բարձրացման համար Ստալինի և Կագանովիչի անվան կոլտնտեսությունների խոտհարքներում ստանում էին հեկտարից 60—65 ցենտներ չոր խոտ։ Այդ սքանչելի շարժումը դժբախտաբար մոռացված է, մինչդեռ պետք էր այն վերականգնել ավելի մեծ չափերով։ Տարակույս չկա, որ ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների ու սովխոզների և գիտական աշխատողները լայնորեն կօգնեն կերային կուլտուրաների և բնական մարգագետինների բերքատվության բարձրացմանն ուղղված ձեռնարկումներն արմատավորելու գործում։

Պետք է կոլտնտեսություններին օգնել ընդլայնելու բազմամյա կուլտուրաների՝ երեքնուկի, տավուշի, կորնգանի, տիմաֆեևկայի, ժիանյակի և այլի սերմարուծությունը։ Պետք է որոնել սիլոսային կուլտուրաների և արմատապտուղների բարձր բերք ստանալու այնպիսի եղանակներ, որոնք հարմար լինեն տեղական պայմաններին։

Ստեփանավանի շրջանի Նորաշեն գյուղի Բուդյոննու անվան կոլտնտեսությունում արդեն երկու տարի է, ինչ հեկտարից ստանում են 1000—1100 ցենտներ գոնգեղ, սակայն այդ փորձը ոչ ոք չի ընհանրացրել և միջոցներ ձեռք չեն առնվել Հայաստանի համար այս նոր կուլտուրան տարածելու ոչ միայն ուրիշ շրջաններում, այլև նույնիսկ հենց Ստեփանավանի շրջանում։

Այժմ, երբ գիտական հիմնարկները կազմում են գիտա-հետազոտական աշխատանքների 1955 թվականի պլանը, նրանք, արտադրությանն օգնելու ակտիվ մեթոդների հետ մեկտեղ, պետք է իրենց ուշադրությունը կենտրոնացնեն գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը բարձրացնելու նոր, արտադրողական մեթոդների մշակման վրա։ Թեմատիկայի մեջ պետք է մտցնել այն միջոցառումների մշակումը, որոնք վերաբերում են գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանը, ստերջության կրճատմանն ու վերացմանը, մատղաշների կենսունակության բարձրացմանը և անասունների անկման կրճատմանը։

Գիտնականները պետք է օգնեն մշակելու այն տեսական հարցերը, որոնք կապված են տեղական անասունները կուլտուրական ցեղերով արամախաչելու հետ։ Այս հարցը լուծելիս հարկավոր է հաշվի առնել շրջանների առանձնահատկությունները և տեղական բարելավվող ցեղի սրակը։ Այս հարցով պետք է անմիջապես զբաղվեն Նոր Բայազետի, Թալինի և Իջևանի շրջանների կոլտնտեսությունների ոչխարաբուծական ֆերմաները։

Գիտական աշխատողների ուշադրությունը կենտրոնացած պետք է լինի խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, խոզերի և գյուղատնտեսական այլ կենդանիների այնպիսի ցեղեր ստեղծելու վրա, որոնք հարմարված լինեն տեղական պայմաններին։ Այս կարևոր հարցում համագործակցություն չկա մի կողմից՝ ռեսպուբլիկայի գիտական աշխատողների և մյուս կողմից՝ արտադրության աշխատողների, այն է՝ պետական տնտեսությունների աշխատողների, կոլտնտեսությունների ու սովխոզների մասնագետների միջև, որի հետևանքով օրինակ՝ ձգձգվում է խոշոր եղջերավոր անասունների՝ Լոռու ցեղի ձևավորումը։

Ռեսպուբլիկայի անասնապահության հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունի նրա առանձին ճյուղերի պլանավորման հարցի ճիշտ լուծումը և գյուղատնտեսության ընդհանուր հարցերի զարգացման հետ նրա զուգակցումը, ուստի և անասնապահության էկոնոմիկան պետք է բազմակողմանի ուսումնասիրության առարկա դառնա մեր գիտնականների կողմից։

Ռեսպուբլիկայում չկան այնպիսի կազմակերպություններ, որոնք ուսումնասիրեին անասնապահական շենքերի շինարարությունը և գտնեին լեռնային պայմաններին հարմար շենքերի նոր տիպեր։ Սովետական Միության մի շարք շրջաններում լայն կիրառում է գտել անասնապահական շենքերի կառուցումը առանց փայտեղենի. այս կարևոր հարցին պետք էր ուշադրություն նվիրել նաև մեր ռեսպուբլիկայում։ Անասնապահական ֆերմաներում աշխատատար աշխատանքների մեքենայացման և էլեկտրիֆիկացման հարցերը նույնպես դուրս են մնացել գիտական հիմնարկների տեսադաշտից։ Միայն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի էլեկտրատեխնիկայի լաբորատորիան է աշխատանք կատարում այդ ուղղությամբ։

Ռեսպուբլիկայի անասնապահական աշխատողների առջև մեծ խնդիրներ են դրված գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի նոր, ավելի էֆեկտիվ մեթոդներ գտնելու բնագավառում։ Պետք է շրջանների անասնապահական աշխատողներին օգնել կանխելու էպիզոոտիկ ու ճիճվային հիվանդությունների առանձին օջախները և միջոցներ գտնել վերացնելու գյուղատնտեսական կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունները։